ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 16.10.2017թ. հ.Ե-1/97 գրության, տեղեկացվում է.

Երևանի ներքաղաքային հասարակական տրանսպորտի շարժակազմերում վարորդների կողմից աշխատանքի ընթացքում ծխելու դեպքերին առնչվող հարցը քննարկվել է «Երևանտրանս» ՓԲ ընկերությունում: Ընկերության կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ վարորդների կողմից ծխելու դեպքերը բացառելու նպատակով, ինչպես նաև երթուղիներում պարբերաբար կատարվում են ստուգայցեր և, ծխելու դեպքեր հայտնաբերելիս, կազմվում են արձանագրություններ, երթուղիները սպասարկող կազմակերպությունների հետ կնքված երթուղու սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ կիրառվում է վարչական պատժամիջոց և դրանց վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվում Երևանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցությունների ընթացքում: Հասարակական տրանսպորտի շարժակազմերի ուղեսրահներում փակցված են ծխելու արգելման մասին ցուցանակներ և հանձնարարվել է «Երևանտրանս» ՓԲ ընկերությանը ստուգայցերի ժամանակ հայտնաբերված, պատռված ցուցանակները պարբերաբար վերականգնել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ